«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ

«27» ՆՈՅԵՄԲԵՐ 2023Թ. **N 652-Լ**

Հ Ր Ա Մ Ա Ն

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ-Ի 2021 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 30-Ի ԹԻՎ 4-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ, 34-րդ հոդվածներով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 17-րդ հոդվածի «Է» կետով, ՀՀ կառավարության 2002 թվականի նոյեմբերի 28-ի թիվ 1933-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 28-րդ կետի «գ» և 29-րդ կետի «գ» ենթակետերով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. «Հայաստանի Հանրապետության փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարի 2021 թվականի նոյեմբերի 30-ի «Հայաստանի Հանրապետության փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի կառուցվածքը և հաստիքացուցակը հաստատելու և 10.06.2020թ.-ի թիվ 88-Լ հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 4-Լ հրամանի (այսուհետ՝ Հրաման) 1-ին կետով հաստատված հավելված 1-ում կատարել հետևյալ փոփոխությունը.

ա) աղյուսակի «Ստորաբաժանում» սյունակում «Շինարարատեխնիկական և ճարտարագիտատեխնիկական փորձաքննությունների բաժին» մասում պաշտոն՝ «Ավագ փորձագետ», քանակը՝ «1», աշխատավարձ՝ «506,520», գործակից՝ «0.63» սյունակների բառերը և թվերը համապատասխանաբար փոխարինել պաշտոն՝ «Փորձագետ», քանակը՝ «1», աշխատավարձ՝ «450.240», գործակից՝ «0.56» բառերով և թվերով,

բ) աղյուսակի «Ստորաբաժանում» սյունակում «Ապրանքագիտական փորձաքննությունների բաժին» մասում պաշտոն՝ «Ավագ փորձագետ», քանակը՝ «1», աշխատավարձ՝ «506,520», գործակից՝ «0.63» սյունակների բառերը և թվերը համապատասխանաբար փոխարինել պաշտոն՝ «Փորձագետ», քանակը՝ «1», աշխատավարձ՝ «450.240», գործակից՝ «0.56» բառերով և թվերով:

2. «Հայաստանի Հանրապետության փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի հանրային կապերի պատասխանատու Արփինե Ադամյանին ապահովել սույն հրամանի հրապարակումը կազմակերպության պաշտոնական ինտերնետային կայքէջում:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՏՆՕՐԵՆ՝ **Դ. ՂՈՒԼՅԱՆ**